DHL

20% զեղչ

ՀՈՒՆԻՍԻ 1-ԻՑ ՕԳՈՍՏՈՍԻ 31-ը

ք.Երեւան, Ամիրյան 27, հեռ.՝(+374 10) 58 66 88
ք. Վանաձոր, Վարդանանց 17, հեռ.՝ (+374 99) 20 66 88
ք. Գյումրի, Գ.Նժդեհի 1/5, հեռ.՝ (+374 99) 10 66 88

FAR
FUND FOR ARMENIAN RELIEF

## Գիտական մրցույթի հրավեր (ANSEF)

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի կողմից 2001թ. հիմնադրված Գիտության եւ կրթության հայկական ազգային հիմնադրամը (ԳԿՀԱՀ) Հայաստանի Հանրապետության գիտնականներին եւ հետազոտողներին հրավիրում է **2009 թ. գիտական դրամաշնորհի մրցույթի:**

Յուրաքանչյուր դրամաշնորհի չափը մինչեւ 5000 ԱՄՆ դոլար է: Գիտական դրամաշնորհի մրցույթի մասնակիցների դիմումներն ընդունվում են էլեկտրոնային փոստով **մինչեւ 2008թ օգոստոսի 31-ը:** Հաղթողները կհայտարարվեն 2008թ. դեկտեմբերի վերջին:

Յուրաքանչյուր դիմումատու դիմումը կարող է լրացնել անմիջապես ԳԿՀԱՀ-ի ինտերնետային կայքում: Էլեկտրոնային համակարգը թույլ է տալիս դիմումատուին խմբագրել եւ փոփոխություններ կատարել իր դիմումի փաթեթում մինչեւ մրցույթի վերջնաժամկետը:

ԳԿՀԱՀ դիմումի լրացման պահանջներին կարող եք ծանոթանալ՝ այցելելով ԳԿՀԱՀ պորտալ (ANSEF portal) հետեւյալ ինտերնետային կայքի միջոցով՝ **www.ansef.org**, ապա «SUBMIT GRANT» ենթաբաժինը:

*ՀՕՖ-ի լրատվական կենտրոն*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

[illegible]

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

[illegible]

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

[illegible]

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

[illegible]

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

[illegible]

## Կենտրոնական բանկի խորհրդի նիստում

Կենտրոնական բանկի խորհուրդը հունիսի 3-ի նիստում, որը վարում էր ԿԲ նախագահի տեղակալ Արթուր Ջավադյանը, փոփոխություններ եւ լրացումներ կատարեց «Սպառողական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ծավալումն եւ հաշվարկման կարգը» կանոնակարգ 3/02-ում:

Խորհրդի որոշմամբ «Ննեքիս» վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն տրամադրվեց «Փարվանա վճարահաշվարկային կազմակերպություն» ՓԲԸ դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությանը եւ հաստատվեցին «Մալաթիա ունիվերսալ վարկային կազմակերպություն» ՍՊԸ «Արախս» եւ «Այրարատ» մասնաճյուղերը:

ԿԲ խորհուրդը ուժը կորցրած ճանաչեց «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ին տրամադրված բրոքերային (դիլերային) գործունեության ԲԳ 0064 եւ արժեթղթերի պահառության գործունեության ՊԳ 0065 լիցենզիաները: «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն 2008 թ. մայիսի 16-ին միջնորդագրով դիմել էր Կենտրոնական բանկ՝ հիշյալ լիցենզիաների գործողությունը դադարեցնելու նպատակով, հանի որ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի եւ կանոնակարգ 4/01-ի 21-րդ գլխի համաձայն՝ «բանկը կարող է մատուցել ներդրումային ծառայություններ՝ առանց ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիայի: Բանկը ներդրումային ծառայությունների մատուցման դեպքում պարտավոր է նախապես տեղեկացնել Կենտրոնական բանկին՝ այդ ծառայությունների մատուցումը սկսելուց առնվազն 15 աշխատանքային օր առաջ»: Օրենքի պահանջի համաձայն՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն 2008 թ. մայիսի 8-ին ԿԲ-ին տեղեկացրել է իր կողմից մատուցվող ներդրումային ծառայությունների մասին:

## Վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 7.00%

2008 թ. հունիսի 3-ի նիստում ԿԲ խորհուրդը վերաֆինանսավորման տոկոսադրույքը բարձրացրեց 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով այն 7.00%:

2008 թ. մայիսին ամիսի նկատմամբ արձանագրվել է 1.3% գնաճ, որի պարագայում 12-ամսյա գնաճը կազմել է 9.9%: Թեեւ այն 0.8 տոկոսային կետով նվազել է ապրիլին արձանագրված համանման ցուցանիշից, սակայն շարունակում է գերազանցել նպատակային թիրախի վերին սահմանը 4.4 տոկոսով:

ԿԲ խորհուրդը արձանագրեց, որ չնայած արտաքին միջավայրից եկող գնաճային ճնշումների թուլացման միտումների առկայությանը, որն արտահայտվել է պարենային ապրանքների, մասնավորապես հացահատիկի եւ բրնձի միջազգային գների նվազմամբ, նավթամթերքի գները շարունակում են բարձր մնալ՝ պահպանելով աճի տենդենցիան: Լրացուցիչ գնաճային ռիսկեր են պարունակում նաեւ համախառն պահանջարկի ակնկալվող աճի տեմպերը եւ արտաքին գնաճային ճնշումների դրսեւորումները:

Կարեւորելով գնաճային սպասումների մեղմման եւ նպատակային թիրախից շեղումների նվազեցման խնդիրները՝ ԿԲ խորհուրդը համակարծիք է, որ Կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքի հետագա ճշգրտումը պայմանավորված կլինի առաջիկա ամիսներին համաշխարհային շուկաներում պարենային ապրանքների գների վերընթաց միտումներին ներքին գների արձագանքման արագությամբ եւ չափով:

*ԿԲ մամուլի ծառայություն*

ԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ

[illegible]

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունեություն իրականացնող «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համար՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու. գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 3.06.2008, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունյաց 2: